ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԴԻՄԻՏՐ ԱՆԳԵԼՈՎ, ՎԱՍԻԼ ԳՅՈՒՉԵԼԵՎ (Բուլղարիա)

Շուրջ մեկ ամիս գիտական գործուղման մեջ լինելով Հայաստանում, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենագարանի և Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական աշխատակիցների օգնությամբ մենք ծանոթացանք միջնադարյան հայ հեղինակների ստեղծագործություններին՝ որոնելով նյութեր բուլղարների ու Բուլղարիայի վերաբերյալ։ Կատարված հետազոտություններից հետո եկանք այն եզրակացության, որ հայ պատմիչների երկերում, տարեգրություններում, աստվածաբանական ստեղծագործություններում և այլ գործերում շատ նյութեր կան նախաբուլղարների, բուլղարների և հայ-բուլղարական հինավուրց կապերի մասին։ Այդ նյութերի մի զգալի մասը մինչև հիմա հայտնի չի եղել միջնադարով զբաղվող մեր մասնագետներին։

Նախաբուլղարները, ինչպես հայտնի է, պատկանում են արևմտյան Թուրքալեղվյան խմբին, որը որպես էթնիկական ընդհանրություն ձևավորվել է Միջին Ասիայում և Արևմտյան Սիբիրում։ Ըստ հնագիտության տվյալների, մեր թվականության սկզբում, Եվրոպայում հոների հաստատվելուց դեռ շատ առաջ, նախաբուլղարները եկել են ու գրավել Մերձկասպյան տափաստանների արևելյան մասերը։ Այստեղ նրանք հարևան են դարձել ոչ միայն սաբիրներին ու ալաններին, այլև հայկական պետությանը։

Բնական է, որ Հյուսիսային Կովկասում ապրող այդ ցեղերի պատմությանը լավատեղյակ վաղ հայկական պատմագրությունը կարող է մեզ որոշ տվյալներ տալ այնտեղ գտնվող նախաբուլղարների մասին։ Ուսումնասիրությունից պարզվեց, որ Մովսես Խորենացու մոտ կան նախաբուլղարներին վերաբերող հատվածներ, որոնցից մեկը, հավանաբար, վերցված է Մար-Աբաս Կատինայից։

«Եւ աստ կոչեցեալ [Վաղարշակը],— կարդում ենք Խորենացու մոտ,— զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին Հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի Հովիտս կամ ի ձորս երկայնաձիգս խորացեալս, ի լեռնէն որ զհարաւով՝ իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ. պատուէր տալով զաւազակութիւն և զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա՝ առաջնորդս և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեսցէ։ Եւ արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք յիւրմէ։ Եւ ինքն արձակեալ զարևմտեայ բազմութիւնն՝ իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարայի. զոր հինքն Անփայտ և վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածի Վղրնդուր Բուլղարայ Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանե-

ցաւ Վանանդ. և անուանք շինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչև ցայժմ»[1]։

Խորենացին բոլորովին այլ դեպքերի կապակցությամբ և մի ուրիշ թագավորի տիրապետության ժամանակ նորից հիշատակում է նախաբուլղարների Հայաստան գաղթելու մասին.

«Ի սորա [Արշակ Ա.-ի] աղմուկ մեծ լեալ ի զօտիս մեծի լերինն Կաւկասու յաշխարհին Բուլղարաց, և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր, և բնակեցան ի ներքոյ Կողայ, յարդաւանդահող և ի հացաւետ տեղիս մինչև ի ժամանակս բազումս»[2]։

Ե՞րբ է տեղի ունեցել այդ գաղթը։ Ոմանք ենթադրում են, որ դա տեղի է ունեցել III դ. (մ. թ. ա.), ուրիշները՝ II—I դդ. (մ. թ. ա.), իսկ երրորդները՝ IV դ. (մ. թ.)։ Վերջերս հայտնվեց ուրիշ մի անվստահելի ենթադրություն, թե նախաբուլղարների գաղթը եղել է V դարում։ Նորագույն հետազոտությունների համաձայն, ըստ Խորենացու պատմական ժամանակագրության և հնագիտական տվյալների, մենք գալիս ենք այն համոզման, որ այդ գաղթը հավանաբար տեղի է ունեցել մ. թ. II դարում։

Բուլղարների (նախաբուլղարների) և հայերի միջև տեղի ունեցած այս առաջին շփումը մի անվիճելի պատմական փաստ է, որը հաստատում է նաև Հայաստանի տոպոնոմիկան։ Այն շրջանը, որտեղ հաստատվել են նախաբուլղարները, անվանվել է Վանանդ. դա նրանց առաջնորդի անունն էր։ Արաքսի ձախ վտակը մինչև օրս էլ կոչվում է Վանանդչայ, իսկ մի գետակ կոչվում է Բուլղարուչայ։ Ուշ շրջանների բոլոր պատմիչները այս կամ այն ձևով վերապատմում են Մ. Խորենացու՝ նախաբուլղարների գաղթին վերաբերող տեղեկությունները։

V դարի հայ պատմիչները (Եղիշե, Փավստոս Բուզանդ և ուրիշներ) իրենց երկերում հաճախ հիշում են հայերի և Կովկասից դեպի հյուսիս ապրած հյուսիսային հոների միջև գոյություն ունեցող հարաբերությունների մասին (բարեկամական կամ թշնամական)։ Արդյո՞ք «հյուսիսային հոներ» հավաքական հասկացության մեջ մտնում են նաև նախաբուլղարները, դրան առայժմ պատմագիտությունը դրական պատասխան չի կարող տալ։

Ավելի ուշ շրջանի պատմիչների երկերում հանդիպում ենք նախաբուլղարներին վերաբերող նաև ուրիշ տեղեկությունների։ XIII դ. պատմիչ Ստ. Օրբելյանի երկում հանդիպում ենք մի հետաքրքիր տեղեկության, որը կիսաառասպելային բնույթի է։ Այստեղ նշված է նախաբուլղարների և պարսիկների միջև VI դ. առաջին կեսում տեղի ունեցած դինված ընդհարումների մասին։ Ինչպես նշում է Ստ. Օրբելյանը, հիշված տեղեկությունները ինքը վերցրել է Սյունյաց եպիսկոպոսի մեզ չհասած երկից (VII դ.)։ Հոների (իմա՝ նախաբուլղարների) առաջնորդ Հոնագուրը քանիցս հարձակվում ու ավերում է պարսկական պետության սահմանները։ Միառժամանակ անցնելուց հետո նա դիմում է Պարսկաստանի թագավոր Անուշիրվան թագավորին (531—579 թթ.), թե բավ է որքան արյուն են թափել։ Նա առաջարկում է վերջ տալ պատերազմներին և դեմ առ դեմ մենամարտել։ Ահեղ Հոնագուրից վախեցած, Պարսկաստանի թագավորը կանչում է հայազգի խիզախ Բաբիկին, որը մենամարտում է նախաբուլ-

1 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոցն», Տփղիս, 1913, էջ 108—109։
2 Նույն տեղում, էջ 119։

ղարների առաջնորդի հետ։ Մենամարտը տևում է ամբողջ օրը։ Վերջում Հոնագուրը ուժասպառ է լինում ու պարտվում[3]։

Որ իսկապես նախաբուլղարների ու պարսիկների միջև տեղի են ունեցել արյունահեղ ճակատամարտեր, վկայում է նաև IX դ. արաբական պատմիչ Ալ-Թարարին։ Նա հաղորդում է, որ Խոսրով Անուշիրվանը, որպեսզի պահպանի Պարսկաստանը հյուսիսային ցեղերի (խազարների և նախաբուլղարների) արշավանքներից, ստիպված է եղել ամրացնել Հյուսիսային Կովկասի բերդերը։

Բացառիկ հետաքրքիր նյութեր կան նախաբուլղարների վաղ պատմության և մասնավորապես բուլղար առաջին տիրակալ Ասպարուխի մասին VII դ. հայոց «Աշխարհացույցում»։ Հայտնված տեղեկությունները մի հավելում են, որոնք, ինչպես կարող ենք ենթադրել, կատարված են VIII դ. սկզբին։ Այնտեղ գրված է. «Որ[ոց] ըստ հիւսիսոյ են ազգ Թուրքաց եւ Բուլղարաց, ըստ անուանց գետոցդ կոչեցեալ Կուփի Բուլղար, Քուչի Բուլկար, Ո[նո]ղխոնտոր Բ[ու]լկար եկն, Զդար Բուլկար. օտար այժմ ի Պտղոմէականէն են այս անուանք։ Եւ ի Զիական լեառնէն վախեաւ որդին Խուդբադայ։

Եւ ընդ մէջ Բուլղարաց եւ ծովուն Պոնտոսի բնակեն ազգք Պաշք եւ Քու[ր]թք եւ Ս[ո]ւանք...»[4]։

Ինչպես երևում է, այստեղ կան բացառիկ հետաքրքրություն առաջացնող տեղեկություններ, որոնք հաստատում են մի կողմից նախաբուլղարական ցեղերի բազմատեսակ անունները, և մյուս կողմից՝ Կուբրաթի «Մեծ Բուլղարիա» դեղամիության տարաբաժանումը և Ասպարուխի առաջնորդությամբ նախաբուլղարների մի բեկորի դեպի հարավ տեղափոխվելը։ Հավելված տեղեկությունները նշում են նաև ուրիշ հետաքրքիր փաստ սլավոնաբուլղարական պետության պատմությունից՝ նրա մղած պայքարը ավարների հզոր խանության դեմ։

Անցյալում Հայաստանը կարևոր ռազմական գիրք է ունեցել աշխարհում և բազմիցս գրավել է մեծ պետությունների ուշադրությունը։ IV դարում Արևելա-Հռոմեական կայսրությունը (Բյուզանդիան) և Սասանյան Պարսկաստանը հետզհետե տիրել են Հայաստանին։ Բյուզանդիայի կայսրերը օգտագործել են հայկական խիզախ բանակը իրենց արշավանքների համար։ Միևնույն ժամանակ նրանք բազմիցս վերաբնակեցրել են հայերին Բալկանյան թերակղզում, որպեսզի այդ աշխարհամասի նվաղած բնակիչների թիվը բազմանա, իսկ ավելի ուշ՝ VI—VII դդ., որպեսզի կարողանան օգտագործել հայ զինվորներին պայքարելու սլավոնական ներխուժման վտանգի դեմ։ Հատկանշական է Բյուզանդիայի Մորիկ (582—602) կայսեր՝ Բալկանյան թերակղզու սահմաններում հայերի բնակեցնելու քաղաքականությունը։ Բալկանյան թերակղզու VI—VII դդ. պատմության մեջ հայերի մասնակցության մասին խիստ կարևոր և հետաքրքիր տեղեկություններ կան «Հերակլի պատմություն» աշխատության մեջ, որը վերագրվում է հայ եպիսկոպոս Սեբեոսին։ Բյուզանդիայի կայսր Մորիկի և Պարսկաստանի Խոսրով Երկրորդ Ապրվեզ թագավորի միջև տեղի են ունեցել բանակցություններ, որոնց ժամանակ քննարկվել է հայ բնակչությանը այլ վայրեր գաղթեցնելու հարցը։ Սեբեոսը գրում է. «Յայնմ ժամանակի թագաւորն յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն պարսից գիր ամբաստան վասն

3 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 38։
4 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 101։

իշխանացն ամենայն Հայաստանեաց և զաւրաց նոցա։ Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ՝ ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի։ Միաբանեցան երկոքին. և սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեսցին զամենեսեանսն և ի Թրակէ գումարեսցեն. և սաստիկ տագնապէր՝ հրամանն կատարէր։ Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ և գալ ի ծառայութիւն պարսից...»[5]։

Բուլղարիայում հայերի մասսայական վերաբնակեցման մասին սա առաջին հաղորդումն է, որը մինչև այժմ չի օգտագործվել մեր պատմագիտության մեջ։ Սույն փաստն ապացուցում է, որ Բալկանյան թերակղզու բազմաթիվ ազգերի շարքում, որոնք ավելի շուտ են շփում ունեցել սլավոնական ցեղերի հետ, եղել են նաև հայեր։

Սլավոնների դեմ Բյուզանդիայի մղած պայքարի ժամանակ կայսրության զրոշների տակ կռվել են նաև հայկական զորքերը։ 593 թ. տեղի ունեցած արշավանքներին մասնակցել է նաև հայկական ջոկատը՝ զորավար Մուշեղ Մամիկոնյանի առաջնորդությամբ։ Սկզբում ջոկատը մեծ հաղթանակներ է տարել, բայց հետագայում ջարդվել է։ Զինվորները ցրվել և ապաստան են գտել Բալկանյան թերակղզու բերդերի մեջ։ Սլավոնները ձերբակալել են Մուշեղ Մամիկոնյանին և կախել մի ծառից։

«Հերակլի պատմության» մեջ, որը մի շատ թանկարժեք աղբյուր է VI—VII դդ. վերաբերյալ, հանդիպում ենք և մի ուրիշ տեղեկության։ Բյուզանդիայի Փոկաս կայսրը (602—610) միջոցներ է ձեռնարկել կայսրության հյուսիսային սահմանն ամրացնելու և սլավոնների գաղթահոսքը դադարեցնելու համար։ Բայց նրա ջանքերն ապարդյուն են անցել։ Այս տեղեկությունները հնարավորություն են տալիս հերքել գիտության մեջ տիրապետող ավանդական դարձած ըմբռնումը, թե սլավոնների զանգվածային գաղթը Բալկանյան թերակղզի կատարվել է առանց արգելքի։

Հայ պատմիչների հետաքրքրությունը Բուլղարիայի պատմության նկատմամբ երևում է և մի քանի ուրիշ փաստերից, որոնք գտնում ենք «Խալիֆների պատմություն» աշխատության մեջ։ Նրա հեղինակը VIII դ. պատմիչ Ղևոնդն է։ Աշխատությունը տեղեկացնում է այն օգնության մասին, որը 705 թ. բուլղարական խան Տերվելը ցույց է տվել Բյուզանդիայի Հուստինիանոս II կայսրին։ Սակայն Ղևոնդի հաղորդած փաստերից մի քանիսը չեն համապատասխանում պատմական ճշմարտությանը։ Օրինակ, ճիշտ չէ Ղևոնդը, երբ ասում է, թե Տերվելին սպանել են ճակատամարտում և նրա գլխավորած զորաբաժինը բաղկացած է եղել խաղարներից[6]։

Ղևոնդը տեղեկություններ է տալիս Թրակիայում Կոստանդին V (741—775) կայսեր դահակալության ժամանակ տեղի ունեցած հայերի գաղթի մասին։ Այս փաստերը հաստատում են բյուզանդական հեղինակներ Թեոփանես խոստովանողը (IX դ.) և պատրիարք Նիկիփորոսը (IX դ.)։ Այս աղբյուրն ընդլայնում է մեր պատկերացումները VIII դ. երկրորդ կեսին Բուլղարիայի և Բյու-

5 «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1912, էջ 75—76։
6 «Պատմութիւն Ղեւոնդայ մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 17։

զանդիայի միջև տեղի ունեցած ընդհարման մասին, որի ժամանակ բյուզանդական բաղմացեղ բանակի կազմում եղել են և հայկական ջոկատներ։ Սլավոնաբուլղարական պետության դեմ մղած պատերազմում հայ զորավար Տաճատը մեծ սխրագործություններ է կատարել և «որոյ անդէն ցուցեալ արքային զարիութիւն ի կողմանս Սարմատացւոց, որ անուանեալ կոչին Բուլղարք և դառնայր մեծաւ յաղթութեամբքն»։ Ուղիղ 22 տարի այս հայ զորավարը ծառայել է Կոստանդինի մոտ՝ հաճախ մասնակցելով Բուլղարիայի դեմ կազմակերպված արշավանքներին։

Բուլղարիայի պատմության նկատմամբ հայ պատմիչների հետաքրքրությունը շարունակվում է հետագա, առավելապես IX—XI դդ., երբ նորից ստեղծվել էր հայկական անկախ պետությունը։ Սա հայ պատմագրության ամենածաղկուն ժամանակաշրջանն է, երբ գրվել են մի շարք երկեր, որոնք ընդգրկել են ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հարևան և ավելի հեռավոր ժողովուրդների (թուրք-սելջուկների, արաբների, բյուզանդացիների, բուլղարների) պատմությանը վերաբերող փաստեր։ Այդ շրջանի պատմաբաններից ամենանշանավորն է «Տիեզերական պատմություն» երկի հեղինակ Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ)։ Ինչպես արդեն հայտնի է, նրա երկում, որը գրված է X դ. վերջում, կան մի շարք տեղեկություններ Բուլղարիայի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների և, մասնավորապես, Վասիլ II-ի ու Սամվելի միջև տեղի ունեցած պատերազմների մասին։

Ասողիկի երկը ծանոթ է եղել Վ. Ն. Զլատարսկուն[8]։ Նրա գրած «Բուլղարական պետության պատմություն» (հատ. I, մաս 2) աշխատության մեջ մի քանի անգամ հիշատակվում են հայ պատմիչի տվյալները, մանավանդ, երբ նկարագրվում են X դ. երկրորդ կեսին տեղի ունեցած դեպքերը։

Բայց Վ. Ն. Զլատարսկին նկատի չի առել բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Բուլղարիայի պատմությանը։ Օրինակ, նա չի օգտագործել մի այնպիսի հետաքրքիր հատված, որտեղ խոսվում է 971 թ. տեղի ունեցած ռուս-բյուզանդական պատերազմի մասին։ Այս հատվածում պատմվում է Բյուզանդիայի Հովհաննես Զմշկիկ կայսեր Բուլղարիա կատարած արշավանքների մասին։ Նշվում է նաև, որ բուլղարները դիմադրել են կայսրին՝ «ռուսների օգնությամբ»։ Սա հետաքրքիր մանրամասնություն է, որը ամրապնդում է վաղուց հայտնված այն կարծիքը, թե Բուլղարիայի Բորիս II թագավորի և Կիևի Սվյատոսլավ իշխանի միջև գոյություն է ունեցել Բյուզանդիայի դեմ ուղղված պատերազմական դաշինք։

Անհրաժեշտ է նշել, որ Ասողիկի այս տեղեկությունը չի օգտագործել նաև Բ. Մութաֆչիևը[9] Սվյատոսլավ իշխանի օրոք ռուսների և բուլղարների հարաբերությունների հարցին նվիրված հոդվածում։

Բուլղարիայի պատմության լուսաբանման գործում մինչև այժմ չօգտագործված հեղինակ է հայ պատմիչ Արիստակես Լաստիվերտցին։ Նրա երկն ընդգրկում է 1000—1071 թթ.։ Զափազանց հետաքրքրական են նրա բացատրությունները Բուլղարիայի՝ բյուզանդական լծի տակ ընկնելու կապակցությամբ։ Ըստ Լաստիվերտցու, բյուզանդական Վասիլ II կայսրը, թեև իր թա-

---

[7] Նույն տեղում, էջ 159։

[8] Բուլղարական հայտնի պատմաբան (ծանոթ բարգմ.)։

[9] Մի ուրիշ հայտնի բուլղարական պատմաբան (ծանոթ. բարգմ.)։

գավորության ժամանակ անդադար պատերազմել է բուլղարների դեմ, սակայն չի կարողացել նրանց նվաճել։ Բուլղարիայի թագավորի մահվանից հետո, որը ունեցել է «շատ հաղթություններ» (հայտնի է, որ խոսքը Սամվելի մասին է), նրա երկրում տեղի են ունեցել խռովություններ։ Նրա ժառանգորդների միջև ծագել է ուժեղ պայքար և իրենք կամովին հանձնվել են Բյուզանդիայի կայսրին։ Ինչպես տեսնում ենք, Լաստիվերտցին Բուլղարիայի նվաճումը բացատրում է տիրակալների միջև ծագած ներքին խռովություններով։

Հայ պատմիչը հետաքրքիր տեղեկություններ է տալիս Վասիլ II-ի գերի վերցրած և նրա տիրապետության տակ մնացած բուլղար զինվորների ճակատագրի մասին։ Նա գրում է, որ նրանց հավաքել են մի տեղում, այն պատրվակով, որ աշխատավարձ բաժանեն, բայց հետո ուղարկել են արևելյան շրջանները, որտեղից նրանք այլևս չեն վերադարձել։ Այս հաղորդումը իր տեսակի մեջ միակն է և տակավին ուրիշ աղբյուրներում հայտնաբերված չէ։ Արժե հիշել նաև Լաստիվերտցու այն տեղեկությունը, ուր բացահայտվում է Վասիլի քաղաքականությունը Բուլղարիայի թագավորական հարստության վերջին ներկայացուցիչների նկատմամբ։ Ժառանգությունից զրկելուց հետո Բյուզանդիայի կայսրը նրանց որպես փոխհատուցում տվել է քաղաքներ հունական հողերի վրա։ Նույն փաստերին հանդիպում ենք և բյուզանդական ու արաբական աղբյուրներում։ Այս ամենը վկայում է, որ «Բուլղարասպանը»[10] լավ է վերաբերվել բուլղարական արիստոկրատիայի ներկայացուցիչների և Սամվելի ժառանգորդների հետ։ Վասիլ II-ի իսկական նպատակն է եղել սիրաշահել նրանց և դրա համար էլ բոլորին լավ պաշտոններ է տվել բյուզանդական կայսրության մեջ, որպեսզի նրանք մոռանան իրենց հայրենիքը։

Լաստիվերտցու երկում հանդիպում ենք Բուլղարիային վերաբերող մի քանի ուրիշ մանր տեղեկությունների ևս։ Այսպես, հիշվում է, որ բուլղար զինվորները մասնակցել են բյուզանդական բանակի Փոքր Ասիայում կատարած հարձակումներին։ Տվյալներ կան Հովհան Վլադիսլավ բուլղար վերջին թագավորի որդու՝ Ահարոն Վեստի մասին, որը բյուզանդական բարձրաստիճան զինվորական էր դարձել և մասնակցել թուրք-սելջուկների դեմ մղված ճակատամարտին։ Հիշվում է նաև Ահարոնի որդու՝ Թեոդորոսի մասին, որը նույնպես բարձրաստիճան զինվորական էր բյուզանդական բանակում և զոհվել է մի ճակատամարտում։ Բուլղարական դահի վերջին ներկայացուցիչների մասին Լաստիվերտցու տված այս տեղեկությունները, ինչպես հայտնի է, հաստատվում են նաև բյուզանդական աղբյուրներով։

Ուրիշ մի հայ պատմիչ, որի երկում շատ հաղորդումներ ենք գտնում Բուլղարիայի պատմության մասին, ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին է։ Նրա աշխատությունները շատ կարևոր աղբյուր են մեզ համար, որովհետև նա հաղորդում է Սամվելի և Վասիլ II-ի միջև տեղի ունեցած պատերազմների և Բուլղարիայի բյուզանդական տիրապետության տակ ընկնելու մասին։ Այդ տվյալների մեծ մասը Վ. Ն. Զլատարսկին օգտագործել է «Բուլղարական պետության պատմություն» (հատ. I, մաս 2) աշխատության մեջ։ Միևնույն ժամանակ նա համեմատել է այդ տվյալները բյուզանդական հեղինակների և Ստ. Տարոնեցու հաղորդումների հետ։ Չնայած դրան, Զլատարսկին չի օգտագործել այն ամենը, ինչ պարունակում է Մ. Ուռհայեցու երկը։ Նա ուշադրություն չի դարձրել,

10 Խոսքը Վասիլ II-ի մասին է (Դանոր. թարգմ.)։

օրինակ, այն հատվածին, ուր նկարագրվում են բուլղարական պետության վերջին օրերը և վերջնականապես նրա գրավումը բյուզանդական կայսրության կողմից (գլ. 36)։ Այդ երկից պարզվում է, որ Մ. Ուռհայեցին Ալուսիանին համարում է Բուլղարիայի վերջին թագավոր և պնդում, որ բյուզանդացիները նրան թունավորել են։ Նրա զավակները գերի են բերվել և Վասիլ կայսրը տեղափոխել է նրանց Կ. Պոլիս։ Ինչպես հայտնի է, բուլղարական պետության վերջին օրերի մասին հիշված հաղորդումները չեն համապատասխանում բյուզանդական հեղինակների տեղեկություններին, և մենք կարծում ենք, որ հենց դրա վրա պետք է ուշադրություն դարձնել։

Վ. Ն. Զլատարսկին իր պատմության մեջ չի օգտագործել Մ. Ուռհայեցու նշումները Պետր Դելյանի[11] գլխավորած ապստամբության մասին, որը տեղի է ունեցել 1040 թ. (գլ. 52)։ Այդ ապստամբության մասին հայ ժամանակագիրը նշում է, որ այն ավարտվել է բուլղարների հաղթությամբ, որ բուլղարները մեծ կորուստներ են պատճառել բյուզանդական Միխայիլ IV կայսեր զորքերին։ Սա արդեն ժամանակագրողի բացահայտ սխալն է։

Մ. Ուռհայեցու երկում կան նաև այլ տեղեկություններ Բուլղարիայի պատմության վերաբերյալ։ Հետաքրքիր է, օրինակ, նրա հաղորդումը, թե բյուզանդական Ալեքսիոս I Կոմնենոս կայսեր բանակում, որը 1089 թ. կռվել է պեչենեգների դեմ, եղել են և բուլղարներ։ Նույնպես հետաքրքիր է Մ. Ուռհայեցու հաղորդումը խաչակիրների առաջին արշավանքի ուղու մասին, որը անցել է Բուլղարիայի վրայով։ Հայ ժամանակագրողը նշում է, որ ժողովուրդները ամենուրեք թշնամաբար են վերաբերվել խաչակիրներին, որի հետևանքով տեղի են ունեցել անբարեհաճ դեպքեր։ Երկու հաղորդումներն էլ համապատասխանում են օտար աղբյուրների տվյալներին։

Բուլղարիայի պատմության մասին տվյալներ գտնում ենք նաև Գրիգոր Մագիստրոսի (XI դ.) մոտ։ Ինչպես հայտնի է, Բուլղարիան Բյուզանդիայի կողմից նվաճվելուց հետո (1018 թ.) բուլղարական շատ ազնվականներ հանձնվել են Վասիլ կայսրին՝ ստանալով պաշտոններ ու կոչումներ կայսրության բանակում։ Սրանցից մեկը Նիկոլա Բուլղարացին է, որը, ինչպես երևում է, մասնակցել է Հայաստանի նվաճմանը։ Շատ վատ հիշողություններ է թողել այդ բուլղարացին հայ ժողովրդի մեջ։ Այդ մասին վկայություն ունի XI դ. հայ զորավար և պատմիչ Գրիգոր Մագիստրոսը։ Իր որդուն ուղղված բանաստեղծություն-նամակի մեջ նա գրում է հետևյալը.

Լուսամ բէ եկըն Պապրն Պաղակ վարդանասարն պիսակ,
Գիշերաբուն Բուլղարաց սպիտակափառն գեսարաս.
Այրարատեանքն զազարն՝ և կոնդրայինքն կատար,
Պատակարոսքն Պրակսիս, սէգ գիշերեանքն ճեմող։
Աւար առող աւերող՝ վատանամբաւ Նիկողոս,
Աղէ գինեա գինուտրեա սպառազինեա դու վառեա[12]։

XII դ. պատմական և ժամանակագրական գրականության զարգացմանը գուգընթաց Հայաստանում ծաղկել է նաև աստվածաբանական գրականությունը, որի գլխավոր նպատակն է եղել պայքարել տարբեր հերետիկոսների քարոզների դեմ։ Ներսես Շնորհալու (1106—1173) մի գրության մեջ, ուղղված

11 Բուլղարական ժողովրդական խիզախ զորավար և առաջնորդ (ծանոթ. բարգմ.)։
12 «Տաղասացութիւնք Գրիգոր Մագիստրոսի Պահլաւունւոյ». Վենետիկ, 1868, էջ 98։

Սամոսատի քաղաքացիներին, հիշվում է նույն ժամանակաշրջանում Հայաստանում և Միջագետքում շատ տարածված արևորդիների աղանդավորական ուսմունքը։ Շնորհալին մասնավորապես նշում է (և, ի միջի այլոց, մեղադրում քարոզողներին), թե նրանց հերձվածը սատանեական է և վատ գործ է կատարում։ Նա գրում է, որ արևորդիների նման գաղտուկ իրենց սրտերում թաքցնում են սատանայական հերձվածը և ականջ չեն դնում առաքյալի խոսքերին նաև այսպես կոչված բոգոմիլները։ Սա չափազանց հետաքրքիր հաղորդում է XII դ. բոգոմիլյան շարժման մասին, որը ցույց է տալիս, թե նրանց ուսմունքը ծանոթ է եղել հայ աստվածաբաններին։

Բուլղարիայի պատմության մասին որոշ տվյալներ ենք գտնում XIII դ. հայ պատմիչների երկերում։ Նրանցից մասնավորապես պետք է նշենք Վարդանին, որը գրել է ամբողջական հայոց պատմություն, սկսած ամենավաղ շրջանից մինչ մոնղոլների արշավանքները։ Վարդանը ևս ուրիշ պատմիչների նման կրկնում է Մ. Խորենացու վերը նշված հաղորդումները, թե նախաբուլղարները դեռ վաղ ժամանակներում բնակություն են հաստատել Կովկասի հարավային մասում։ Ինչպես երևում է, այս տեղեկությունները ուժեղ տպավորություն են թողել հայ պատմիչների վրա, որովհետև մինչև XIII դ. նրանք անդադար կրկնում են դրանք։ Սրանից զատ, Վարդանի երկում կա մի ուրիշ հետաքրքիր հաղորդում, որը վերաբերում է խաչակիրների երկրորդ արշավանքի մասնակից գերմանական զինվորների Բուլղարիայով անցնելուն (1189 թ.)։ Հայ պատմիչը հաղորդում է, որ խաչակիրների բանակի առաջնորդ, գերմանական կայսր Ֆրիդրիխ I Բարբարոսան, որը հակամարտության մեջ է եղել Բյուզանդիայի հետ, գրավել է Վեռո (ներկայիս Ստ. Զագորա), Ֆիլիպուպոլիս (Պլովդիվ) և Ադրիանուպոլիս (Էդիրնե) քաղաքները, ինչպես նաև ուրիշ շատ բնակավայրեր ու բերդեր։ Այս տվյալները համապատասխանում են բյուզանդական և արևմտյան պատմագրության աղբյուրների տվյալներին։

Արժե հիշատակել Վարդանի գրածը բյուզանդացիների և խաչակիրների միջև տեղի ունեցած բախման ավարտի և այն պայմանագրի մասին, որը Իսահակ Անգելոս կայսրը և Ֆրիդրիխ Բարբարոսան ստորագրել են Պոլսում։ «Իսկ Կոստանդնուպօլսացիք խնդրեցին ողորմութիւն և ետուն հարիւր կենդինար ոսկւոյ և երկու հարիւր արծաթոյ, և ձրի անցուցին զամենայն բազմութիւնն՝ զոր առեալ էին ի Բլախաց և ի Բուլղարաց յոլովութիւն գանձուց ի յանցանելն ընդ աշխարհս նոցա»[13]։ Վարդանի այս տեղեկությունը ամրապնդում է բազմիցս հիշատակված այն փաստը, թե խաչակիրները Բալկանյան թերակղզով անցնելիս կողոպտել են մասնավորապես բուլղարներին։ Միևնույն ժամանակ այս հաղորդումը վերջնականապես հաստատում է վաղուց հայտնի այն կարծիքը, թե XIII դ. երկրորդ կեսին, երբ Թըրնովոյում[14] տեղի է ունեցել Ասեն թագավորի ղեկավարած ապստամբությունը, Բուլղարիայում ապրել են մեծ թվով վլասներ։ Ինչպես հայտնում է հայ պատմիչը, այդ վլասները բուլղարների հետ միասին տուժել են և կորուստներ են ունեցել խաչակիրներից։

XIII դ. մի ուրիշ հայ հեղինակի՝ Կիրակոսի Պատմությունը ընդգրկում է այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել IV դ. մինչև մոնղոլների արշավանքը։ Այս գրքում շատ նյութեր կան բյուզանդական կայսրության մասին։ Ի միջի

---

13 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 178։

14 Միջնադարյան Բուլղարիայի մայրաքաղաքը (ծանոթ. թարգմ.)։

այլոց, նա մի քանի խոսքով անդրադառնում է Վասիլ II-ի թագավորության շրջանին և անվանում նրան «Բուլղարասպան»։ Այս մանրամասնությունը շատ հետաքրքրական է, որովհետև մինչև օրս միայն բյուզանդական աղբյուրներում ենք հանդիպում այդ անվանմանը։ Կարելի է ենթադրել, որ Կիրակոսը այդ անունը վերցրել է հենց այդ աղբյուրներից։

XIII դ. պահպանված է մի համառոտ ժամանակագրություն, որը կազմել է Մխիթար Այրիվանեցին։ Դրա մեջ գտնում ենք Բուլղարիայի մասին մի քանի տեղեկություններ (901 թ. Թրակիայում տեղի ունեցած երկրաշարժի և Բալկանյան թերակղզով խաչակիրների անցնելու մասին)։

Հայ պատմիչների հետաքրքրությունը Բուլղարիայի պատմության նկատմամբ շարունակվում է և թուրքերի տիրապետության ժամանակաշրջանում։ Այդ դարերում մի շարք արևմտաեվրոպական ճանապարհորդներ անցել են Բուլղարիայով։ Նրանց թվում եղել են և հայեր, որոնք իրենց ճամփորդական նոթերի մեջ տալիս են շատ արժեքավոր տեղեկություններ։

Այդ ճանապարհորդներից հատկապես աչքի է ընկնում Սիմեոն Լեհացին։ 1608 թ. ամռանը նա անցել է Արևելյան Բուլղարիայով։ Քաղաքներից, բնակավայրերից, երկրից և մարդկանցից ստացած տպավորությունները նա թողել է ճամփորդական նոթերի մեջ։ Հոսովոյի, Թլրնովոյի, Պրովադիայի, Այթոսի, բալկանյան ճանապարհների, Էդիրնեի, Կոստանդնուպոլսի և Սկոպիայի մասին տված նկարագրությունները ոչ միայն հետաքրքիր են բուլղարական պատմության, այլև Բալկանյան թերակղզու պատմական աշխարհագրության համար։ Դրանք հնարավորություն են տալիս հետևել Բուլղարիայի քաղաքների, ինչպես նաև հայկական գաղութների աճմանն ու զարգացմանը։ Ճամփորդական նոթերից պարզվում է, որ XVII դարում Սև ծովի ափին ապրող ազգաբնակչության մեծ մասը հույներ են եղել, իսկ հետո՝ հայեր։ Հետաքրքիր է նույնպես նրա հաղորդումը այն մասին, որ Ռումինիայում այդ ժամանակներում եղել են բազմաթիվ բուլղարական գյուղեր։ Սրանից գալիս ենք այն եզրակացության, որ հիշված ժամանակաշրջանում տեղի է ունեցել բուլղարների զանգվածային տեղափոխում դեպի Վլաշկո[15]։ Տարօրինակ է նրա հաղորդումը (երևում է, որ ճշմարտությունից զուրկ է), թե Բոսնա քաղաքում ապրել են բուլղարներ, թե այնտեղ գոյություն են ունեցել բուլղարական շատ եկեղեցիներ։

Շատ հետաքրքիր է հայ ճանապարհորդ Մարտիրոս Ղրիմեցու ուղեգրությունը։ Նա Բուլղարիայում եղել է 1675—1676 թթ.։ Ուղեգրությունը շարադրված է չափածո և ձոնված է զանազան բուլղարական քաղաքների։ Երևում է, որ Ղրիմեցին լավ տպավորություն չի ստացել այդ քաղաքներից ու նրանց բնակիչներից և դրա համար էլ բանաստեղծությունները լի են ծաղրական արտահայտություններով։ Ահա հիշված ոտանավորներից մի քանիսը, որոնք ձոնված են Բուրգաս և Անհիալո (ներկայիս Պոմորիե) քաղաքներին։ Որչափ մեղ հայտնի է, սրանք մեր քաղաքներին ձոնված առաջին բանաստեղծություններն են.

Պուրգազ, դու հիմանգ Մանդիս
Քո շինուածքդ ամէն կործանի.
Աւեր և անտերունչ մնաս.
Դու նման Սոդոմ Մադամի։

Ջուրդ դառնահամ և գարշ
Համեմատ ծովու ի լեզի
. . . . . .
Թնակիչ քո շար ն դժնեայ
Նմանին որդոցն Քամի։

15 Ռումինիայի մերձդանության բարեբեր շրջաններից մեկը, ուր ավելի ուշ՝ XVIII դ. գաղթել են շատ բուլղարներ, այդ թվում մի շարք բուլղար հասարակական գործիչներ, հեղափոխականներ, մտավորականներ (ծանոթ. բարգմ.)։

Բայց դու զայս ծանիր, տիրացու Նիկոլ
Անուն Բաղամիդ ու կոչի Անեոլ.
Հաց ու կեր չունի, միայն ջուրն է, պոլ,
Վերչն ի մնա խորապա և տեղ[16]:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ հայ հին մատենագրությունը (պատմական երկեր, տարեգրություններ, աստվածաբանական ստեղծագործություններ և ուղեգրություններ) ընգգրկում է մեծ քանակությամբ տակավին չօգտագործված կամ անծանոթ նյութեր։ Կատարած հետազոտությունը հնարավորություն տվեց ճշտել կամ ուղղել Բուլղարիայի պատմության որոշ տվյալներ, որոնք մինչև օրս մեզ ծանոթ էին միայն բյուզանգական աղբյուրներից։ Համոզված ենք, որ հայկական աղբյուրների օգտագործումը շատ բան կտա միջնադարով զբաղվող մեր պատմաբաններին։ Իհարկե, այդ երկերը դգուշությամբ և քննադատորեն պետք է օգտագործել, համեմատելով այն ամենի հետ, ինչ մինչև օրս լույս է տեսել, և նրանցից վերցնել միայն ճշգրիտ վկաստերն ու հաղորդումները։

Անհրաժեշտ է նշել, որ Մաշտոցի անվան մատենադարանում պահվում են նաև մի քանի սլավոնական ձեռագրեր, որոնք շատ կարևոր են մեզ համար։ Դրանցից հարկ է նշել հին բուլղարական Աստվածաշնչի մի քանի պատառիկներ, որոնց տեքստը մեծ նշանակություն ունի բուլղարական լեզվի պատմության համար։ Հիշված ձեռագրի ապագա ուսումնասիրումը ցույց կտա նրա ստեղծման վայրը և հնարավորություն կստեղծի լրացնել Բուլղարիայի միջնադարյան գրականության պատմության մինչև այժմ թափուր մնացած էջերը։ Ենթադրում ենք, որ այս Աստվածաշնչի պատառիկները Հայաստան են հասել Մոլդավիայի և Ուկրաինայի վրայով։

Սոֆիայում 1630 թ. կազմված հայկական մի Աստվածաշնչի կազմի մեջ օգտագործված են բուլղարական հին ձեռագրերի երկու թերթեր, որոնց վրա կան մանրանկարներ։ Մեկի վրա պատկերված է Հիսուս Քրիստոսը իր երկու աշակերտների հետ, իսկ մյուսի վրա՝ Սիբիլան։ Նկարներն ունեն իրենց տեքստերը։ Այս երկու թերթերը բուլղարական մանրանկարչության, հնագրության և ուղղագրության զարգացման համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

Ի վերջո, պետք է նշել, որ հայկական մատենագրության մեր կատարած հետազոտությունները չենք կարող ավարտած համարել։ Անկասկած հարուստ ու տակավին չլուսաբանված և լույս չտեսած միջնադարյան հայ գրականությունը պարունակում է ևս մի շարք հաղորդումներ ու տեղեկություններ Բուլղարիայի պատմության վերաբերյալ, որոնք այսուհետև պետք է որ հայտնաբերենք ու օգտագործենք։ Անկասկած, այս խնդրի լուծման համար մենք ղդում ենք մեր հայ գործընկերների օգնության և աջակցության կարիքը։

Թարգմ. Հ. ՕՐՄԱՆՃՅԱՆ (Սոֆիա)

---

16 Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 110—111։

АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ О СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИИ БОЛГАРИИ

ДИМИТР АНГЕЛОВ, ВАСИЛ ГЮЗЕЛЕВ (Болгария)

(Резюме)

В ряде работ армянских средневековых авторов (исторические и богословские труды, летописи и т. д.) содержатся сведения о протоболгарах, болгарах и древних армяно-болгарских связях. Значительная часть этих материалов, обнаруженная авторами в период их работы в Матенадаране им. Маштоца, не была известна специалистам из Болгарии.

В «Истории Армении» армянского историка V в. Мовсеса Хоренаци имеются интересные сведения о переселении протоболгар в Армению, которое имело место, вероятно, во II в. н. э. О первом болгарском правителе Аспарухе содержатся сведения в добавлении к «Армянской географии VII в.», созданной в VII в. Ценные сведения о Болгарии и болгарах содержатся в трудах армянских историков Себеоса (VII в.), Гевонда (VIII в.), Асохика (X в.), Аристакеса Ластивертци (XI в.), Матевоса Урхаеци (XII в.), Степаноса Орбеляна (XIII в.), Вардана (XIII в.), Киракоса Гандзакеци (XIII в.), Мхитара Айриванеци (XIII в.), Симеона Лехаци (XVII в.), Мартироса Кримеци (XVII в.).

Проведенное предварительное исследование уже дало возможность уточнить некоторые факты из истории Болгарии. Дальнейшее критическое использование армянских источников, несомненно, даст многое специалистам по средневековой истории Болгарии.